

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 29.04.2016 թ. թիվ 267 Լ/Կ հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 4 28.04.2016թ.

Վանաձոր

2016թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) կրթական կենտրոնների (այսուհետ՝ Կրթական կենտրոններ) կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է Կրթական կենտրոնների կազմակերպչական և մեթոդական հիմքը և նրանց հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև Համալսարանի այլ ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

1.2. Կրթական կենտրոնները Համալսարանի համագործակցության և կապերի բաժնի կառուցվածքային ենթաբաժիններ են:

1.3. Կրթական կենտրոնները իրենց գործունեության ընթացքում առաջնորդվում են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կրթության և գիտության նախարարության նորմատիվային փաստաթղթերով, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի գիտխորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով և Կանոնակարգով:

1.4. Կրթական կենտրոնների աշխատանքները ղեկավարում է Համալսարանի համագործակցության և կապերի բաժնի վարիչը:

1.5. Կրթական կենտրոնները համագործակցում են միմյանց հետ, ինչպես նաև Համալսարանի տարբեր ստորաբաժանումների հետ:

1.6. Յուրաքանչյուր կրթական կենտրոնի աշխատանքը համակարգում է կրթական կենտրոնի մեթոդիստը:

1.7. Կրթական կենտրոնները ստեղծվում և լուծարվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:

2. ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. **Կրթական կենտրոնների գործունեության նպատակն է** կայուն կապեր հաստատել Համալսարանի և Լոռու մարզի դպրոցների, Համալսարանի և Վրաստանի հայկական դպրոցների միջև:

2.2. **Կրթական կենտրոնների խնդիրներն են.**

2.2.1. նպաստել դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը,

2.2.2. ներդնել և կիրառել արդյունավետ տեղեկատվական տեխնոլոգիաներ Համալսարանի գործունեությունը Լոռու մարզի դպրոցների և Վրաստանի հայկական դպրոցների դպրոցականներին և նրանց ծնողներին ներկայացնելու համար,

2.2.3. մշակել և ներդնել հեռավար ուսուցման նորարարական տեխնոլոգիաներ Համալսարան-դպրոց կապերը արդյունավետ զարգացնելու համար,

2.2.4. խթանել Համալսարանի համար դիմորդների հավաքագրումը:

3. ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1. Լոռու մարզի և Վրաստանի հայկական դպրոցներում Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների դասախոսությունների, սեմինարների, խորհրդատվությունների կազմակերպում.
- 3.2. Համալսարանի դասախոսների, աշխատակիցների հանդիպումների կազմակերպում Լոռու մարզի և Վրաստանի հայկական դպրոցների ուսուցչական կոլեկտիվների, աշակերտության և ծնողների հետ.
- 3.3. Համալսարանի դասախոսների կողմից առցանց դասերի անցկացման ապահովում.
- 3.4. առարկայական օլիմպիադաների առաջին փուլի անցկացում Լոռու մարզի դպրոցների աշակերտների համար.
- 3.5. Լոռու մարզի և Վրաստանի հայկական դպրոցներում մշակութային միջոցառումների կազմակերպում` Համալսարանի ուսանողների և դասախոսների, մշակույթի կենտրոնի աշխատակիցների մասնակցությամբ.
- 3.6. Լոռու մարզի և Վրաստանի հայկական դպրոցների աշակերտության շրջանում մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հարցումների և խորհրդատվությունների անցկացում.
- 3.7. Լոռու մարզի դպրոցների մասնակցության կազմակերպում Համալսարանի շարունակական (հարատև) կրթության կենտրոնի աշխատանքներին.
- 3.8. Լոռու մարզի դպրոցներում Համալսարանի ուսանողների պրակտիկայի անցկացման վերահսկում.
- 3.9. Համալսարանի համագործակցության և կապերի բաժնի աշխատանքային պլանով նախատեսված այլ միջոցառումների անցկացում: